

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ
(ԴԵՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ)

1. ԴԵՂԻ ԱՆՎԱՆՈՒՄ

Դուտտամ 0,5 մգ / 0,4 մգ կարծր դեղապատիճներ

2. ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄ

Դուտտամ դեղի յուրաքանչյուր դեղապատիճը պարունակում է 0,5 մգ դուտաստերիդ և 0,4 մգ տամսուլոգլինի հիդրոքլորիդ (համարժեք է 0,367 մգ տամսուլոգլինին):

Հայտնի ազդեցությամբ օժանդակ նյութեր

Դուտտամ դեղի յուրաքանչյուր դեղապատիճ պարունակում է լեցիտինի հետքեր (կարող է պարունակել սոյայի յուղ) և մոտավորապես 103 մգ պրոպիլենգլիկոլ:

Օժանդակ նյութերի ամբողջական ցանկը տես 6.1 բաժնում:

3. ԴԵՂԱՁԵՎ

Դեղապատիճներ, կարծր

Երկարավուն, կարծր ժելատինային դեղապատիճներ՝ շագանակագույն հիմքով և բեժ գույնի կափարիչով, որի վրա սև թանաքով մակնշված է «C001»:

Դեղապատիճի պարունակությունը. բաց դեղին գույնի, երկարավուն փափուկ ժելատինային դեղապատիճ (մոտավորապես 16,5 x 6,5 մմ)՝ լցված թափանցիկ հեղուկով և տամսուլոգլինի սպիտակից մինչև գրեթե սպիտակ գրանուլներով:

4. ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

4.1 Ցուցումներ

Դուտտամ դեղը կիրառվում է շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի չափավորից մինչև ծանր ախտանիշների բուժման նպատակով:

Դուտտամ դեղը կիրառվում է շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի չափավորից մինչև ծանր ախտանիշներ ունեցող պացիենտների շրջանում՝ սուր միզակապության և վիրահատությունների ռիսկը նվազեցնելու նպատակով:

Կլինիկական փորձարկումներում ուսումնասիրված պացիենտների պոպուլյացիաների և բուժման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տես 5.1 բաժնում:

4.2. Կիրառման ձևեր և դեղաչափման կարգ

Դեղաչափման կարգ

Չափահասներ (ներառյալ՝ տարեցներ)

Դուտտամ դեղի թույլատրելի դեղաչափն է՝ մեկ դեղապատիճ (0,5 մգ/0,4 մգ)՝ օրական մեկ անգամ:

Անհրաժեշտության դեպքում բուժման գործընթացը հեշտացնելու նպատակով, դուտաստերիդի և տամսուլոգլինի հիդրոքլորիդի զուգորդված կիրառումը կարելի է փոխարինել Դուտտամ դեղով:

Ըստ կլինիկական նպատակահարմարության, կարող է դիտարկվել դուտաստերիդի կամ տամսուլոգինի հիդրոքլորիդի մոնոթերապիայից ուղղակի անցումը Դուտտամ դեղի կիրառմանը:

Երիկամային անբավարարություն

Երիկամային անբավարարության ազդեցությունը դուտաստերիդ/տամսուլոգինի դեղակինետիկայի վրա չի ուսումնասիրվել: Երիկամային անբավարարություն ունեցող պացիենտների շրջանում դեղաչափի ճշգրտում նախատեսված չէ (տես 4.4 և 5.2 բաժինները):

Լյարդային անբավարարություն

Լյարդային անբավարարության ազդեցությունը դուտաստերիդ/տամսուլոգինի դեղակինետիկայի վրա չի ուսումնասիրվել, ուստի, թեթև կամ չափավոր լյարդային անբավարարություն ունեցող պացիենտների շրջանում Դուտտամ դեղը պետք է կիրառել զգուշությամբ (տես 4.4 և 5.2 բաժինները): Դուտտամ դեղը հակացուցված է լյարդային ծանր անբավարարություն ունեցող պացիենտներին (տես 4.3 բաժինը):

Մանկական պոպուլյացիա

Մանկական պոպուլյացիայում (18 տարեկանից ցածր) դուտաստերիդ/տամսուլոգինի կիրառումը հակացուցված է (տես 4.3 բաժինը):

Կիրառման ձև

Դուտտամ դեղը նախատեսված է ներքին ընդունման համար:

Պացիենտին պետք է տեղեկացնել, որ անհրաժեշտ է կուլ տալ ամբողջական դեղապատիճը՝ ամեն օր նույն ժամին ուտելուց մոտավորապես 30 րոպե անց: Դեղապատիճները չի կարելի է ծամել կամ բացել: Կարծր թաղանթով դեղապատիճի մեջ առկա դուտաստերիդի դեղապատիճի պարունակության հետ շփումը կարող է առաջացնել բերանը մպանային խոռոչի լորձաթաղանթի գրգռում:

4.3 Հակացուցումներ

Դուտտամ դեղը հակացուցված է՝

- դուտաստերիդի, 5-ալֆա ռեդուկտազայի այլ արգելակիչների, տամսուլոգինի (ներառյալ՝ տամսուլոգինով հրահրված անոթանյարդային այտուց), սոյայի, գետնանուշի կամ 6.1 բաժնում թվարկված օժանդակ նյութերից որևէ մեկի նկատմամբ գերզգայունության դեպքում,
- կանանց, երեխան երին և դեռահասներին (տես 4.6 բաժինը),
- նախկինում ուղղեկեցվածքային թերճնշում ունեցող պացիենտներին,
- լյարդային ծանր անբավարարություն ունեցող պացիենտներին:

4.4 Կիրառման հատուկ հրահանգներ և նախազգուշացումներ

Համակցված բուժում պետք է նշանակել օգուտ-ռիսկ հարաբերակցությունը մանրակրկիտորեն գնահատելուց հետո՝ կողմնակի ազդեցությունների (ներառյալ՝ սրտային անբավարարություն) առաջացման հնարավոր բարձր ռիսկի պատճառով, և բուժման այլընտրանքային տարբերակները, ներառյալ՝ մոնոթերապիան դիտարկելուց հետո:

Շագանակագեղձի քաղցկեղ և բարձր աստիճանի ուռուցքներ

REDUCE ուսումնասիրությունը, 4-ամյա, բազմակենտրոն, ռանդոմիզացված, կրկնակի կույր, պլացեբո հսկմամբ փորձարկումը բացահայտել է օրական 0,5 մգ դուտաստերիդի ազդեցությունը շագանակագեղձի քաղցկեղի առաջացման բարձր ռիսկ ունեցող պացիենտների շրջանում (այդ թվում՝ շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի 2,5–10 նգ/մլ ցուցանիշ ունեցող և հետազոտությունում ընդգրկվելուց 6 ամիս առաջ շագանակագեղձի բիոպսիայի բացասական արդյունքով 50–75 տարեկան տղամարդիկ)՝ պլացեբոյի համեմատությամբ:

Ուսումնասիրությունը բացահայտեց դուտաստերիդով բուժված տղամարդկանց շրջանում ըստ Գլխոնի սանդղակի 8-10 գնահատվող շագանակագեղձի քաղցկեղի զարգացման ավելի բարձր հաճախականություն (n=29, 0,9%) պլացեբոյի համեմատությամբ (n=19, 0,6%):

Դուտաստերիդի և ըստ Գլխոնի սանդղակի 8-10 գնահատվող քաղցկեղների միջև կապը հստակ չէ: Այսպիսով, Դուտաստ ընդունող տղամարդկանց շրջանում պետք է պարբերաբար գնահատել շագանակագեղձի քաղցկեղի առաջացման հավանականությունը (տես 5.1 բաժինը):

Շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմին

Արյան շիճուկում շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի կոնցենտրացիան շագանակագեղձի քաղցկեղի հայտնաբերման կարևոր բաղադրիչ է: Բուժումից 6 ամիս անց Դուտաստ դեղը իջեցնում է արյան շիճուկում շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի միջին ցուցանիշը մոտավորապես 50 %-ով:

Դուտաստ դեղով բուժումից 6 ամիս անց պացիենտները պետք է ունենան շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի նոր ելակետային մակարդակ: Դրանից հետո խորհուրդ է տրվում պարբերաբար վերահսկել հակամարմնի ցուցանիշները:

Դուտաստ դեղով բուժվելու ընթացքում շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի ամենացածր մակարդակի յուրաքանչյուր հաստատված բարձրացում կարող է վկայել շագանակագեղձի քաղցկեղի առկայության կամ Դուտաստ դեղով բուժման անհամապատասխանության մասին, և այն պետք է մանրակրկիտորեն գնահատվել, նույնիսկ եթե այդ արժեքները դեռևս նորմայի սահմաններում են գտնվում այն տղամարդկանց մոտ, որոնք չեն ընդունում 5-ալֆա ռեդուկտազայի արգելակիչ (տես 5.1 բաժինը):

Դուտաստերիդ ընդունող պացիենտի մոտ շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի ցուցանիշը մեկնաբանելիս, համեմատության համար անհրաժեշտ են հակամարմնի նախորդ արժեքները:

Դուտաստ դեղով բուժումը չի խոչընդոտում շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմինը, որպես շագանակագեղձի քաղցկեղի ախտորոշման միջոց օգտագործելուն՝ ելակետային նոր ցուցանիշի հաստատումից հետո:

Բուժումը դադարեցնելուց հետո 6 ամսվա ընթացքում շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի շիճուկային ընդհանուր մակարդակը վերադառնում է ելային արժեքին: Ազատ և ընդհանուր սպեցիֆիկ հակամարմնի հարաբերակցությունը մնում է հաստատուն՝ նույնիսկ Դուտաստ դեղի ազդեցության ներքո: Եթե բժիշկներն ազատ սպեցիֆիկ հակամարմնի

տոկոսն ընտրում են որպես Դուտտամ դեղով բուժման ընթացքում տղամարդկանց շագանակագեղձի քաղցկեղի հայտնաբերման միջոց, ապա դրա արժեքի ճշգրտման անհրաժեշտություն չկա:

Նախքան Դուտտամ դեղով բուժում սկսելը և դրանից հետո՝ պարբերաբար, պացիենտների շրջանում պետք է իրականացնել ուղիղաղիքային մատնային հետազոտություն, ինչպես նաև շագանակագեղձի քաղցկեղի կամ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի համանման ախտանիշներ առաջացնող այլ վիճակների գնահատում:

Սիրտ-անոթային համակարգի կողմնակի ազդեցություններ

4-ամյա երկու կլինիկական փորձարկումներում, սրտային անբավարարության (հաղորդված դեպքերի ընդհանուր տերմին, հիմնականում՝ սրտային անբավարարություն և կանգային սրտային անբավարարություն) դեպքերը փոքր-ինչ ավելի շատ էին դուտաստերիդն ալֆա-1 ադրենալնկալիչների անտագոնիստների, հիմնականում՝ տամսուլոզինի հետ համակցված ընդունող պացիենտների շրջանում՝ համեմատած այդ համակցությունը չընդունող պացիենտների հետ:

Սակայն, այս փորձարկումներում սրտային անբավարարության հաճախականությունն ավելի ցածր էր ակտիվորեն բուժվող բոլոր խմբերում՝ պլացեբո խմբի հետ համեմատ, և դուտաստերիդի կամ ալֆա-1 ադրենալնկալիչների անտագոնիստների համար առկա այլ տվյալները չեն հիմնավորում սրտանոթային ռիսկերի ավելացման վերաբերյալ եզրակացությունը (տես 5.1 բաժինը):

Կրծքագեղձի նորագոյացություն

Կլինիկական փորձարկումներում և հետգրանցումային շրջանում դուտաստերիդ ընդունող տղամարդկանց շրջանում արական կրծքագեղձի քաղցկեղի հազվադեպ հաղորդումներ են եղել: Այնուամենայնիվ, համաճարակաբանական ուսումնասիրությունները տղամարդկանց շրջանում 5-ալֆա ռեդուկտազայի արգելակիչների օգտագործմամբ պայմանավորված արական կրծքագեղձի քաղցկեղի զարգացման ռիսկի աճ ցույց չեն տվել (տես 5.1 բաժինը):

Բժիշկները պետք է զգուշացնեն պացիենտներին, որ նրանք անհապաղ տեղյակ պահեն կրծքագեղձի հյուսվածքի ցանկացած փոփոխության մասին, ինչպիսիք են ուռուցքները կամ պտուկից արտադրությունները:

Երիկամային անբավարարություն

Երիկամային ծանր անբավարարություն (կրեատինինի մաքրումը ցածր է 10մլ/րոպե ցուցանիշից) ունեցող պացիենտների բուժումը պետք է իրականացնել զգուշությամբ, քանի որ այդ պացիենտների շրջանում հետազոտություններ չեն կատարվել:

Զարկերակային թերճնշում

Ուղղեկեցվածքային

Ինչպես ալֆա-1 ադրենալնկալիչների այլ անտագոնիստների դեպքում, այնպես էլ տամսուլոզինով բուժման ընթացքում, զարկերակային ճնշումը կարող է նվազել, որի արդյունքում հազվադեպ կարող է առաջանալ ուշաթափություն: Դուտտամ դեղով բուժում սկսող պացիենտներին պետք է զգուշացնել, որ ուղղեկեցվածքային թերճնշման առաջին իսկ

նշանների (գլխապտույտ, թուլություն) դեպքում, մինչև դրանց անհետանալը, նստած կամ պառկած դիրք ընդունեն:

Կեցվածքային թերճնշման առաջացման հնարավորությունը նվազագույնի հասցնելու համար, նախքան ֆոսֆոդիէսթերազա-5 ֆերմենտի արգելակիչներով բուժումը սկսելը, պացիենտը պետք է հեմոդինամիկորեն կայուն լինի ալֆա-1 ադրենալնկալիչների անտագոնիստների նկատմամբ:

Ախտանիշային

Խորհուրդ է տրվում զգուշություն ցուցաբերել ալֆա ադրենապաշարիչները, այդ թվում՝ տամսուլոզինը, ֆոսֆոդիէսթերազա-5 ֆերմենտի արգելակիչների (օրինակ՝ սիլդենաֆիլ, տադալաֆիլ, վարդենաֆիլ) հետ միաժամանակ կիրառելիս: Ալֆա-1 ադրենալնկալիչների անտագոնիստները և ֆոսֆոդիէսթերազա-5 ֆերմենտի արգելակիչները անոթալայնիչներ են, որոնք կարող են իջեցնել զարկերակային ճնշումը: Այս երկու խմբի դեղերի միաժամանակ կիրառումը կարող է հանգեցնել ախտանիշային թերճնշման առաջացման (տես 4.5 բաժինը):

Ներվիրահատական ճկուն ծիածանաթաղանթի համախտանիշ

Որոշ պացիենտների շրջանում, որոնք նախկինում բուժվել են կամ բուժվում են տամսուլոզինով, կատարակտի վիրահատության ժամանակ ի հայտ է եկել ներվիրահատական ճկուն ծիածանաթաղանթի համախտանիշ (փոքր բքի համախտանիշի տեսակ): Վիրահատության ընթացքում և դրանից հետո այս համախտանիշը կարող է մեծացնել աչքի բարդությունների առաջացման ռիսկը: Հետևաբար, խորհուրդ չի տրվում Դուտտամ դեղով բուժում սկսել այն պացիենտների շրջանում, որոնց մոտ նախատեսված է կատարակտի վիրահատություն:

Նախավիրահատական գնահատման ընթացքում կատարակտը վիրահատող բժիշկը և ակնաբուժական խումբը պետք է ճշտեն, արդյոք կատարակտի վիրահատության պատրաստվող պացիենտը բուժվում է կամ բուժվել է Դուտտամ դեղով՝ ներվիրահատական ճկուն ծիածանաթաղանթի համախտանիշը կառավարելու համար ձեռնարկվող համապատասխան միջոցառումներ ապահովելու համար:

Կատարակտի վիրահատությունից 1-2 շաբաթ առաջ տամսուլոզինի կիրառման դադարեցումը ոչ պաշտոնապես համարվում է արդյունավետ, բայց կատարակտի վիրահատությունից առաջ բուժման դադարեցման օգուտը և տևողությունը դեռևս հաստատված չէ:

Արտահոսող դեղապատիճ

Քանի որ դուտաստերիդը ներծծվում է մաշկի միջով կանայք, երեխաները և դեռահասները պետք է խուսափեն արտահոսող դեղապատիճի հետ շփումից (տես 4.6 բաժինը): Արտահոսող դեղապատիճի հետ շփվելու դեպքում շփման մակերեսն անմիջապես պետք է լվանալ օճառով և ջրով:

CYP3A4 և CYP2D6 ֆերմենտների արգելակիչներ

Տամսուլոզինի հիդրոքլորիդի զուգահեռ կիրառումը CYP3A4 ֆերմենտի ուժեղ արգելակիչների (օրինակ՝ կետոկոնազոլ) կամ ավելի քիչ՝ CYP2D6 ֆերմենտի ուժեղ արգելակիչների (օրինակ՝ պարոքսետին) հետ, կարող է մեծացնել տամսուլոզինի ազդեցությունը (տես 4.5 բաժինը):

Հետևաբար, խորհուրդ չի տրվում տամսուլոզինի հիդրոքլորիդը կիրառել CYP3A4 ֆերմենտի ուժեղ արգելակիչներ ընդունող պացիենտների շրջանում, իսկ այն պացիենտների շրջանում, ովքեր օգտագործում են CYP3A4 ֆերմենտի չափավոր արգելակիչներ, CYP2D6 ֆերմենտի ուժեղ կամ չափավոր արգելակիչներ, զուգահեռ CYP3A4 և CYP2D6 ֆերմենտների արգելակիչներ, կամ հայտնի է, որ CYP2D6 ֆերմենտի թույլ մետաբոլիզմ ունեցող պացիենտներ են, պետք է կիրառել զգուշությամբ:

Լյարդային անբավարարություն

Դուտաստերիդ/տամսուլոզինի կիրառումը լյարդի հիվանդություններ ունեցող պացիենտների շրջանում չի ուսումնասիրվել: Թույլից մինչև չափավոր լյարդային անբավարարություն ունեցող պացիենտների շրջանում Դուտամ դեղը պետք է կիրառել զգուշությամբ (տես 4.2, 4.3 և 5.2 բաժինները):

Դուտամ դեղը պարունակում է սոյայի լեցիտին, որը կարող է պարունակել սոյայի յուղ: Հակացուցված է գետնանուշի կամ սոյայի նկատմամբ ակերգիայի առկայության դեպքում:

Դուտամ դեղը պարունակում է պրոպիլենգլիկոլ և նատրիում:

Դուտամ դեղի յուրաքանչյուր դեղապատիճ պարունակում է մոտավորապես 103 մգ պրոպիլենգլիկոլ:

Դուտամ դեղի յուրաքանչյուր դեղապատիճ պարունակում է 1 մմոլ-ից պակաս նատրիում (23 մգ), ինչը նշանակում է՝ այն էապես «ազատ է նատրիումից»:

4.5 Փոխազդեցությունները այլ դեղերի հետ կամ այլ բնույթի փոխազդեցություններ

Դուտաստերիդ/տամսուլոզինի հետ այլ դեղերի փոխազդեցությունների վերաբերյալ ուսումնասիրություններ չեն իրականացրել: Հետևյալ տեսակետներն արտացոլում են առանձին բաղադրատարրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Դուտաստերիդ

Դուտաստերիդով բուժման ընթացքում արյան շիճուկում շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի մակարդակի իջեցման և շագանակագեղձի քաղցկեղի հայտնաբերման վերաբերյալ տեղեկատվությունը տես 4.4 բաժնում:

Այլ դեղերի ազդեցությունը դուրաստերիդի դեղակինետիկայի վրա

Դուտաստերիդը հիմնականում արտազատվում է մետաբոլիզմի միջոցով: In vitro ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ CYP3A4 և CYP3A5 ֆերմենտները խթանում են այդ մետաբոլիզմը: CYP3A4 ֆերմենտի ուժեղ արգելակիչների հետ փոխազդեցության պաշտոնական ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Այնուամենայնիվ, պոպուլյացիայում կատարված դեղակինետիկական հետազոտությունում, այլ պացիենտների հետ համեմատած՝ դուտաստերիդի շիճուկային կոնցենտրացիան միջինում համապատասխանաբար 1,6 և 1,8 անգամ բարձր է եղել վերապամիլով կամ

դիլթիազեմով (CYP3A4 ֆերմենտի չափավոր արգելակիչներ և P-գլիկոպրոտեինի արգելակիչներ) միաժամանակյա բուժում ստացող փոքրաթիվ պացիենտների շրջանում:

Դուտաստերիդի և CYP3A4 ֆերմենտի ուժեղ արգելակիչների (օրինակ՝ ներքին ընդունման ռիտոնավիր, ինդինավիր, նեֆազոդոն, իտրակոնազոլ, կետոկոնազոլ) համակցված երկարատև կիրառումը կարող է բարձրացնել դուտաստերիդի շիճուկային կոնցենտրացիան: Դուտաստերիդի ուժեղացած ազդեցությամբ 5 ալֆա-ռեդուկտազայի հետագա արգելակումը հավանական չէ:

Այնուամենայնիվ, կողմնակի ազդեցությունների ի հայտ գալու դեպքում պետք է դիտարկել դուտաստերիդի դեղաչափման հաճախականության նվազեցումը: Պետք է նշել, որ ֆերմենտի արգելակման դեպքում երկարատև կիսատրոհման փուլը հնարավոր է ավելի երկարաձգվի, և մինչև նոր հավասարակշռված վիճակի հասնելը կարող է պահանջվել ավելի քան 6 ամսվա միաժամանակյա բուժում:

Դուտաստերիդի 5 մգ մեկանգամյա դեղաչափի ընդունումից 1 ժամ անց 12 գ խոլեստիրամինի կիրառումը դուտաստերիդի դեղակինետիկայի վրա չի ազդել:

Դուտաստերիդի ազդեցությունը այլ դեղերի դեղակինետիկայի վրա

Առողջ տղամարդկանց շրջանում երկու շաբաթ տևողությամբ փոքր ուսումնասիրության (n=24) ընթացքում դուտաստերիդը (օրական 0,5 մգ) չի ազդել տամսուլոզինի կամ տերազոսինի դեղակինետիկայի վրա: Այս ուսումնասիրությունում դեղադինամիկական փոխազդեցություն, նույնպես, չի դիտվել:

Դուտաստերիդը չի ազդում վարֆարինի կամ դիգօքսինի դեղակինետիկայի վրա: Դա նշանակում է, որ դուտաստերիդը չի արգելակում/խթանում CYP2C9 ֆերմենտը կամ P-գլիկոպրոտեինի փոխադրիչը: In vitro փոխազդեցության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դուտաստերիդը չի արգելակում CYP1A2, CYP2D6, CYP2C9, CYP2C19 կամ CYP3A4 ֆերմենտները:

Տամսուլոզին

Տամսուլոզինի հիդրոքլորիդի միաժամանակյա կիրառումը զարկերակային ճնշումը նվազեցնող դեղերի հետ՝ այդ թվում անզգայացնող միջոցներ, ֆոսֆոդիէսթերազա-5 ֆերմենտի արգելակիչներ կամ այլ ալֆա-1 ադրենալնալիչների անտագոնիստներ, կարող է հանգեցնել թերճնշումային ազդեցության ուժեղացմանը: Դուտաստերիդ/տամսուլոզինը չպետք է համակցված կիրառել ալֆա-1 ադրենալնալիչների այլ անտագոնիստների հետ:

Տամսուլոզինի հիդրոքլորիդի և կետոկոնազոլի (CYP3A4 ֆերմենտի ուժեղ արգելակիչ) միաժամանակյա կիրառումը հանգեցրել է տամսուլոզինի C_{max} -ի և AUC-ի բարձրացմանը՝ համապատասխանաբար 2,2 և 2,8 գործակցով: Տամսուլոզինի հիդրոքլորիդի և պարօքսետինի (CYP2D6 ֆերմենտի ուժեղ արգելակիչ) միաժամանակյա կիրառումը հանգեցրել է տամսուլոզինի հիդրոքլորիդի C_{max} - ի և AUC- ի բարձրացմանը՝ համապատասխանաբար 1,3 և 1,6 գործակցով:

Նմանատիպ բարձրացում սպասելի է CYP2D6 ֆերմենտի թույլ մետաբոլիզմ ունեցող պացիենտների շրջանում՝ ուժեղ մետաբոլիզմ ունեցողների համեմատությամբ, երբ համակցված կիրառվում է CYP3A4 ֆերմենտի ուժեղ արգելակիչի հետ: Տամսուլոզինի

հիդրոքլորիդի հետ CYP3A4 և CYP2D6 ֆերմենտների արգելակիչների համակցված կիրառման հետևանքները կլինիկորեն չեն գնահատվել, սակայն առկա է տամսուլոզինի ազդեցության զգալի ուժեղացման հավանականություն (տես 4.4 բաժինը):

Տամսուլոզինի հիդրոքլորիդի (0,4 մգ) և ցիմետիդինի (400 մգ յուրաքանչյուր 6 ժամը մեկ անգամ՝ 6 օր տևողությամբ) համակցված կիրառումը հանգեցրել է տամսուլոզինի հիդրոքլորիդի մաքրման նվազեցման (26%) և AUC-ի բարձրացման (44%): Դուտաստերիդ/տամսուլոզինը ցիմետիդինի հետ կիրառելիս պետք է ցուցաբերել զգուշություն:

Տամսուլոզինի հիդրոքլորիդի և վարֆարինի միջև դեղային փոխազդեցության վերջնական ուսումնասիրություն չի իրականացվել: In vitro և in vivo սահմանափակ հետազոտությունների արդյունքները վճռորոշ չեն: Դիկլոֆենակը և վարֆարինը, այնուամենայնիվ, կարող են մեծացնել տամսուլոզինի արտազատման արագությունը: Պետք է զգուշություն ցուցաբերել՝ վարֆարինը և տամսուլոզինը միաժամանակ կիրառելիս:

Ատենոլոլի, էնալապրիլի, նիֆեդիպինի կամ թեոֆիլինի հետ տամսուլոզինի հիդրոքլորիդի միաժամանակյա կիրառման դեպքում փոխազդեցություններ չեն դիտվել: Ֆուրոսեմիդի հետ միաժամանակյա կիրառումը հանգեցնում է պլազմայում տամսուլոզինի մակարդակի իջեցմանը, բայց քանի որ այն մնում է նորմալի սահմաններում, դեղաչափի ճշգրտման անհրաժեշտություն չկա:

Ոչ դիազեպամը, և ոչ էլ պրոպրանոլոլը, եռքլորմեթիլազիդը, քլորմադինոնը, ամիտրիպտիլինը, դիկլոֆենակը, գլիբենկլամիդը կամ սիմվաստատինը մարդու արյան պլազմայում in vitro պայմաններում չեն փոխում տամսուլոզինի ազատ ֆրակցիան: Տամսուլոզինը ևս՝ դիազեպամի, պրոպրանոլոլի, եռքլորմեթիլազիդի և քլորմադինոնի ազատ ֆրակցիաները չի փոխում:

4.6. Վերարտադրողականություն, հղիություն և կրծքով կերակրման շրջան

Կանանց շրջանում Դուտամ դեղի կիրառումը հակացուցված է: Հղիության, կրծքով կերակրման, վերարտադրողականության շրջանում դուտաստերիդ/տամսուլոզինի ազդեցության վերաբերյալ հետազոտություններ չեն իրականացվել: Հետևյալ տեսակետներն արտացոլում են առանձին բաղադրատարրերի ուսումնասիրություններից ստացված տեղեկատվությունը (տես 5.3 բաժինը):

Հղիություն

Ինչպես 5-ալֆա ռեդուկտազայի այլ արգելակիչներ՝ դուտաստերիդը նույնպես արգելակում է տեստոստերոնի փոխակերպումը դիհիդրոտեստոստերոնի, և, հնարավոր է, արական սեռի պտուղ կրող կնոջ մոտ դեղի կիրառումը հանգեցնի պտղի արտաքին սեռական օրգանների զարգացման արգելակման (տես 4.4 բաժինը):

Դուտաստերիդով բուժվող պացիենտների սերմնահեղուկում հայտնաբերվել է քիչ քանակությամբ դուտաստերիդ: Հայտնի չէ, արդյոք այն բացասական ազդեցություն կունենա պտղի վրա, եթե մայրը ենթարկվի դուտաստերիդով բուժվող պացիենտի

սերմնահեղուկի ազդեցությանը (որի ռիսկն ամենամեծն է հղիության առաջին 16 շաբաթների ընթացքում):

Ինչպես 5 ալֆա-ռեղուկտազայի բոլոր արգելակիչների դեպքում, երբ պացիենտի զուգընկերը հղի է կամ կարող է հղիանալ, խորհուրդ է տրվում պացիենտին պահպանակ կիրառելու միջոցով զուգընկերոջը զերծ պահել սերմնահեղուկի ազդեցությունից:

Տամսուլոգինի հիդրոքլորիդը իգական սեռի հղի առնետների և ճագարների վրա կիրառելիս պտղի վրա վնասակար ազդեցություն չի հայտնաբերվել:

Նախակլինիկական հետազոտության տվյալները տես 5.3 բաժնում:

Կրծքով կերակրման շրջան

Հայտնի չէ՝ արդյոք դուտաստերիդը կամ տամսուլոգինը ներթափանցում է մարդու կրծքի կաթ:

Վերարտադրողականություն

Կան հաղորդումներ, որ դուտաստերիդն ազդում է առողջ տղամարդկանց սերմնահեղուկի բնութագրերի վրա (սերմնաբջիջների քանակի, սերմնահեղուկի ծավալի և սերմնաբջիջների շարժունակության նվազում) (տես 5.1 բաժինը): Պետք է նկատի ունենալ տղամարդկանց վերարտադրողականության նվազեցման հավանականությունը:

Տամսուլոգինի հիդրոքլորիդի ազդեցությունը սերմնաբջիջների քանակի կամ ֆունկցիայի վրա չի գնահատվել:

4.7 Ազդեցությունը փոխադրամիջոցներ վարելու և սարքավորումների հետ աշխատելու կարողությունների վրա

Փոխադրամիջոցներ վարելու և սարքավորումների հետ աշխատելու կարողության վրա դուտաստերիդ/տամսուլոգինի ազդեցության ուսումնասիրություններ չեն կատարվել: Այնուամենայնիվ, պացիենտներին պետք է տեղեկացնել, որ Դուտամ դեղը կիրառելիս հնարավոր է առաջանան ուղղեկեցվածքային թերճնշմամբ պայմանավորված այնպիսի ախտանիշներ, ինչպիսին գլխապտույտն է:

4.8 Կողմնակի ազդեցություններ

Ներքոնշյալ տվյալները վերաբերում են դուտաստերիդի և տամսուլոգինի համակցված կիրառման 4-ամյա CombAT (դուտաստերիդի և տամսուլոգինի համակցում) ուսումնասիրության վերլուծությանը՝ համեմատելով 4 տարվա ընթացքում օրական մեկ անգամ 0,5 մգ դուտաստերիդի և 0,4 մգ տամսուլոգինի՝ մոնոթերապիայի ձևով կամ համակցված կիրառման արդյունքները:

Միաժամանակ կիրառվող դուտաստերիդի և տամսուլոգինի համեմատությամբ ցուցադրվել է դուտաստերիդ/տամսուլոգին համակցության կենսահամարժեքությունը (տես 5.2 բաժինը): Տրամադրվել է նաև առանձին բաղադրատարրերի (դուտաստերիդ և տամսուլոգին) կողմնակի ազդեցությունների պրոֆիլների վերաբերյալ տեղեկատվություն: Պետք է հաշվի առնել, որ առանձին բաղադրատարրերի կիրառումից հաղորդված ոչ բոլոր կողմնակի ազդեցություններն են հաղորդվել դուտաստերիդ/տամսուլոգին համակցության համար, և դրանք ներառված են դեղը նշանակող բժշկին անհրաժեշտ տեղեկատվության համար:

4-ամյա CombAT ուսումնասիրությունից ստացված տվյալները ցույց են տվել, որ դեղով պայմանավորված կողմնակի երևույթի՝ հետազոտողների կողմից գնահատված ցանկացած դեպք, բուժման առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ տարիներին դուռաստերիդի և տամսուլոզինի համակցված կիրառման ընթացքում կազմել է համապատասխանաբար 22%, 6%, 4% և 2%, դուռաստերիդի մոնոթերապիայի համար՝ 15%, 6%, 3% և 2%, տամսուլոզինի մոնոթերապիայի համար՝ 13%, 5%, 2% և 2%:

Միաժամանակյա բուժում ստացող խմբում բուժման առաջին տարում կողմնակի երևույթների առավել շատ դեպքերը պայմանավորված են եղել այս խմբում վերարտադրողականության խանգարումների, մասնավորապես՝ սերմնաժայթքման խանգարումների առավել շատ դեպքերով:

CombAT, շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի մոնոթերապիայի կլինիկական և REDUCE ուսումնասիրություններում դեղով պայմանավորված կողմնակի երևույթների՝ հետազոտողների կողմից գնահատված դեպքերը, բուժման առաջին տարվա ընթացքում կազմել են 1 % կամ ավելի՝ ինչպես ցուցադրված է ստորև ներկայացված աղյուսակում:

Բացի այդ, տամսուլոզինի ստորև թվարկված կողմնակի ազդեցությունները հիմնված են հանրության շրջանում առկա տեղեկատվության վրա: Համակցված բուժման դեպքում կողմնակի ազդեցությունների առաջացման հաճախականությունը կարող է մեծանալ:

Կլինիկական փորձարկումների ընթացքում հայտնաբերված կողմնակի ազդեցություններն ըստ հանդիպման հաճախականության.

Հաճախ ($\geq 1/100$ -ից մինչև $< 1/10$), ոչ հաճախ ($\geq 1/1000$ -ից մինչև $< 1/100$), հազվադեպ ($\geq 1/10000$ -ից մինչև $< 1/1000$), շատ հազվադեպ ($< 1/10000$): Յուրաքանչյուր օրգան համակարգի խմբում կողմնակի ազդեցությունները ներկայացված են ըստ դրանց ծանրության աստիճանի նվազման:

| Դասակարգում ըստ օրգան համակարգերի | Կողմնակի ազդեցություններ | Դուռաստերիդ+տամսուլոզին^ա | Դուռաստերիդ | Տամսուլոզին^գ |
|--|--|--|-----------------------|--------------------------------|
| <i>Նյարդային համակարգի խանգարումներ</i> | Ուշաթափություն | - | - | Հազվադեպ |
| | Գլխապտույտ | Հաճախ | - | Հաճախ |
| | Գլխացավ | - | - | Ոչ հաճախ |
| <i>Սիրտի խանգարումներ</i> | Սրտային անբավարարություն (ընդհանուր հասկացություն ¹) | Ոչ հաճախ | Ոչ հաճախ ² | - |
| | Սրտխփոց | - | - | Ոչ հաճախ |
| <i>Անոթային խանգարումներ</i> | Ուղղեկեցվածքային թերճնշում | - | - | Ոչ հաճախ |
| <i>Շնչական համակարգի, կրծքային և</i> | Ռինիտ | - | - | Ոչ հաճախ |

| | | | | |
|--|--|-------|--------------------|--------------|
| <i>միջնորմային օրգանների խանգարումներ</i> | | | | |
| <i>Սրամոքս-ադիքային համակարգի խանգարումներ</i> | Փորկապություն | - | - | Ոչ հաճախ |
| | Փորլուծություն | - | - | Ոչ հաճախ |
| | Սրտխառնոց | - | - | Ոչ հաճախ |
| | Փսխում | - | - | Ոչ հաճախ |
| <i>Մաշկի և ենթամաշկային հյուսվածքների խանգարումներ</i> | Անոթանյարդային այտուց | - | - | Հազվադեպ |
| | Սթիվեն-Ջոնսոնի համախտանիշ | - | - | Շատ հազվադեպ |
| | Եղնջացան | - | - | Ոչ հաճախ |
| | Ցան | - | - | Ոչ հաճախ |
| | Քոր | - | - | Ոչ հաճախ |
| <i>Վերարտադրողականության համակարգի և կրծքագեղձի խանգարումներ</i> | Պրիապիզմ | - | - | Շատ հազվադեպ |
| | Իմպոտենցիա ² | Հաճախ | Հաճախ ^բ | - |
| | Լիբիդոյի փոփոխություն (նվազում) ³ | Հաճախ | Հաճախ ^բ | - |
| | Սերմնաժայթքման խանգարումներ ^{3*} | Հաճախ | Հաճախ ^բ | Հաճախ |
| | Կրծքագեղձի խանգարումներ ² | Հաճախ | Հաճախ ^բ | - |
| <i>Ընդհանուր խանգարումներ և փոփոխություններ կիրառման տեղում</i> | Ասթենիա | - | - | Ոչ հաճախ |

^ա. Դուտաստերիդ + տամսուլոզին՝ ըստ CombAT ուսումնասիրության այս կողմնակի ազդեցությունների հաճախականությունները նվազում են բուժման 1-4 տարիների ընթացքում:

^բ. Դուտաստերիդ՝ ըստ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի մոնոթերապիայի կլինիկական հետազոտությունների:

^գ. Տամսուլոզին՝ ըստ տամսուլոզինի ԵՄ հիմնական անվտանգության պրոֆիլի:

^դ. REDUCE ուսումնասիրություն (տես 5.1 բաժինը):

¹. «Սրտային անբավարարություն» ընդհանուր հասկացությունը ներառում է կանգային սրտային անբավարարություն, սրտային անբավարարություն, ձախ փորոքային

անբավարարություն, սուր սրտային անբավարարություն, կարդիոգեն շոկ, սուր ձախ փորոքային անբավարարություն, աջ փորոքային անբավարարություն, սուր աջ փորոքային անբավարարություն, փորոքային անբավարարություն, սիրտ-թոքային անբավարարություն, կանգային կարդիոմիոպաթիա:

².Ներառում է կրծքագեղձի զգայունության բարձրացումը և կրծքագեղձի մեծացումը:

³.Վերարտադրողականության համակարգի այս կողմնակի ազդեցությունները կապված են դուտաստերիդով բուժման հետ (ներառյալ մոնոթերապիան և տամսուլտոզինի հետ համակցությունը): Այս կողմնակի ազդեցությունները կարող են պահպանվել բուժումը դադարեցնելուց հետո, և դրանում դուտաստերիդի դերն անհայտ է:

⁴.Ներառում է սերմնահեղուկի ծավալի նվազումը:

Այլ տվյալներ

REDUCE ուսումնասիրությունը բացահայտել է դուտաստերիդով բուժվող տղամարդկանց շրջանում ըստ Գլխոնի սանդղակի 8-10 միավոր գնահատվող քաղցկեղների առաջացման ավելի բարձր հաճախականություն՝ համեմատած պլացեբոյի հետ (տես 4.4 և 5.1 բաժինները):

Հայտնի չէ, արդյոք շագանակագեղձի փոքրացումը պայմանավորված է դուտաստերիդի ազդեցությամբ, թե այս ուսումնասիրության արդյունքների վրա ազդող հետազոտության հետ կապված գործոններով:

Կլինիկական փորձարկումների և հետգրանցումային փուլում կիրառման ընթացքում հաղորդվել է տղամարդկանց կրծքագեղձի քաղցկեղի մասին (տես 4.4 բաժինը):

Հետգրանցումային տվյալներ

Ամբողջ աշխարհում կիրառման հետգրանցումային փորձով պայմանավորված կողմնակի ազդեցությունները հայտնաբերվում են հետգրանցումային փուլում առկա սպոնտան բնույթի հաղորդումներով, հետևաբար կողմնակի ազդեցությունների հանդիպման ստույգ հաճախականություն հայտնի չէ:

Դուտաստերիդ

Իմունային համակարգի խանգարումներ

Անհայտ հաճախականությամբ՝ ալերգիկ ռեակցիաներ, այդ թվում՝ ցան, քոր, եղնջացան, տեղային այտուց և անոթանյարդային այտուց:

Հոգեկան խանգարումներ

Անհայտ հաճախականությամբ՝ դեպրեսիա:

Մաշկի և ենթամաշկային հյուսվածքների խանգարումներ

Ոչ հաճախ՝ մազաթափություն (առաջին հերթին մարմնի մազաթափություն), հիպերտրիխոզ:

Վերարտադրողականության համակարգի և կրծքագեղձի խանգարումներ

Անհայտ հաճախականությամբ՝ ամորձիների ցավ, ամորձիների այտուց:

Տամսուլտոզին

Հետգրանցումային փուլում՝ դիտարկման ընթացքում, կատարակտի վիրահատության ժամանակ փոքր բքի համախտանիշի տեսակ համարվող ներվիրահատական ճկուն

ծիածանաթաղանթի համախտանիշի վերաբերյալ հաղորդումները կապված են եղել ալֆա-1 ադրենալնկալիչների անտագոնիստների, այդ թվում՝ տամսուլոզինի, կիրառման հետ (տես 4.4 բաժինը):

Բացի այդ, տամսուլոզինի օգտագործմամբ պայմանավորված հաղորդվել է նաև նախասրտերի ֆիբրիլյացիայի, առիթմիայի, հաճախասրտության, հևոցի, քթից արյունահոսության, տեսողության պղտորման, տեսողության խանգարման, *բազմաձև էրիթեմայի, շերտազատվող (էքսֆոլիատիվ) մաշկաբորբի*, սերմնաժայթքման խանգարումների, ռետրոգրադ սերմնաժայթքման, սերմնաժայթքման անբավարարության և բերանում չորության առաջացման մասին: Հնարավոր չէ ստույգ հաստատել կողմնակի ազդեցությունների հաճախականությունը և տամսուլոզինի դերը դրանց առաջացման մեջ:

Կասկածելի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդում

Հետգրանցումային փուլում կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին հաղորդելը կարևոր է: Դա հնարավորություն է տալիս շարունակաբար գնահատել դեղի կիրառմամբ պայմանավորված ռիսկերի և ակնկալվող օգուտի հարաբերակցությունը: Առողջապահության համակարգի մասնագետները կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին կարող են առցանց հաղորդել ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ www.pharm.am հղումով կամ զանգահարել թեժ գիծ. հեռախոսահամարներ (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

4.9. Գերդեղաչափում

Դուտաստերիդ/տամսուլոզինի գերդեղաչափման վերաբերյալ տվյալներ չկան: Հետևյալ տեսակետներն արտացոլում են առանձին բաղադրատարրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Դուտաստերիդ

Կամավորների շրջանում կատարված ուսումնասիրություններում, առանց անվտանգության լուրջ խնդիրների կիրառվել է դուտաստերիդն օրական մեկ անգամ, մինչև 40 մգ դեղաչափով (80 անգամ մեծ բուժական դեղաչափից) 7 օր տևողությամբ: Կլինիկական փորձարկումներում 6 ամսվա ընթացքում դուտաստերիդն օրական 5 մգ դեղաչափ կիրառող պացիենտների շրջանում լրացուցիչ կողմնակի ազդեցություններ ի հայտ չեն եկել, համեմատած 0,5 մգ բուժական դեղաչափ ընդունող պացիենտների, որոնց մոտ նկատվել են դրանք:

Դուտաստերիդի հատկորոշիչ հակաթույն առկա չէ, հետևաբար, գերդեղաչափման կասկածի դեպքում ախտանիշային և աջակցող բուժումը պետք է իրականացնել ըստ անհրաժեշտության:

Տամսուլոզին

Հաղորդվել է 5 մգ տամսուլոզինի հիդրոքլորիդի կիրառման արդյունքում սուր գերդեղաչափման մասին: Դիտվել է սուր թերճնշում (սիստոլիկ զարկերակային ճնշումը՝ 70 մմ սնդիկի սյուն), փսխում և փորլուծություն, որոնք բուժվել են հեղուկի ընդունմամբ, և նույն

օրը պացիենտը պատրաստ է եղել դուրսգրման: Գերդեղաչափումից առաջացող սուր թերճնշման դեպքում անհրաժեշտ է սիրտ-անոթային համակարգին օգնություն ցուցաբերել: Զարկերակային ճնշումը կարող է վերականգնվել և սրտի ռիթմը կարգավորվել պացիենտի՝ պառկած դիրք ընդունելու դեպքում: Եթե դա չի օգնում, ապա կարող են օգտագործվել ծավալը մեծացնող, և, անհրաժեշտության դեպքում նաև՝ անոթասեղմիչ միջոցներ: Պետք է վերահսկել երիկամների ֆունկցիան և իրականացնել ընդհանուր աջակցող միջոցառումներ: Քիչ հավանական է, որ դիալիզը կարող է օգնել, քանի որ տամսուլոզինը շատ ամուր է կապակցվում արյան պլազմայի սպիտակուցների հետ:

Ներծծումը կանխելու նպատակով կարելի է ձեռնարկել միջոցառումներ, օրինակ՝ առաջացնել փսխում: Մեծ քանակների դեպքում կարելի է կատարել ստամոքսի լվացում և կիրառել ակտիվացված ածուխ ու որևէ օսմոտիկ լուծողական նյութ, օրինակ՝ նատրիումի սուլֆատ:

5. ԴԵՂԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Դեղաբուժական խումբ

Միզասեռական համակարգի վրա ազդող դեղեր, ալֆա-ադրենալնկալիչների անտագոնիստներ

Անատոմիական-բուժական-քիմիական ծածկագիր

G04CA52

5.1 Դեղադինամիկա

Դուտաստերիդ/տամսուլոզինը երկու դեղերի համակցություն է. դուտաստերիդ՝ 5-ալֆա ռեդուկտազայի կրկնակի արգելակիչ և տամսուլոզինի հիդրոքլորիդ՝ ալֆա-1a և ալֆա-1d ադրենալնկալիչների անտագոնիստ: Այս դեղերն ունեն ազդեցության փոխլրացնող մեխանիզմներ, որոնք արագորեն բարելավում են ախտանիշները, մեզի հոսքը և նվազեցնում են սուր միզակապության առաջացման ռիսկը և շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատական միջամտությունների անհրաժեշտությունը:

Դուտաստերիդը պաշարում է 5-ալֆա ռեդուկտազայի 1 և 2 տիպի իզոֆերմենտները, որոնք ապահովում են տեստոստերոնի փոխակերպումը դիհիդրոտեստոստերոնի:

Դիհիդրոտեստոստերոնը անդրոգեն է, որը շագանակագեղձի աճի և շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի զարգացման հիմնական պատասխանատուն է: Տամսուլոզինն արգելակում է շագանակագեղձի հենքահյուսվածքային (ստրոմալ) հարթ մկանների և միզապարկի պարանոցի ալֆա-1a և ալֆա-1d ադրենալնկալիչները: Շագանակագեղձի ալֆա-1 ընկալիչների մոտավորապես 75 %-ը կազմում է ալֆա-1a ենթատեսակը:

Դուտաստերիդի միաժամանակյա կիրառումը տամսուլոզինի հետ

Հետևյալ տեսակետներն արտացոլում են դուտաստերիդով և տամսուլոզինով համակցված բուժման վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

4-ամյա բազմակենտրոն, բազմազգային, ռանդոմիզացված կրկնակի կույր, զուգահեռ խմբերով ուսումնասիրություններում, օրական 0,5 մգ դուտաստերիդի (n = 1623), օրական 0,4 մգ տամսուլոզինի (n = 1611) կամ 0,5 մգ դուտաստերիդի և 0,4 մգ տամսուլոզինի (n =

1610) միաժամանակյա կիրառումը գնահատվել է շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի՝ չափավորից մինչև ծանր ախտանիշներով տղամարդկանց շրջանում, ովքեր ունեցել են ≥ 30 մլ շագանակագեղձի ծավալ և շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի՝ 1,5 – 10 նգ/մլ միջակայքում գտնվող արժեքներ:

Պացիենտների մոտավորապես 53%-ը նախկինում ընդունել է 5-ալֆա ռեդուկտազայի արգելակիչ կամ ալֆա-1 ադրենալնկալիչի անտագոնիստ:

Բուժման առաջին երկու տարվա ընթացքում արդյունավետության հիմնական վերջնակետերն էին Շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման համակարգում (IPSS սանդղակ) փոփոխությունը. 8 միավորից բաղկացած գործիքակազմ (հիմնված միզասեռական համակարգի հիվանդությունների մասնագետների ամերիկյան ասոցիացիայի կողմից կազմված հարցաշարի վրա), որում ներառված է նաև կյանքի որակին վերաբերող լրացուցիչ հարց: 2 տարվա ընթացքում արդյունավետության երկրորդային վերջնակետերը ներառում էր մեզի հոսքի առավելագույն արագությունը (Q_{max}) և շագանակագեղձի ծավալը:

Ըստ Շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման համակարգի՝ դեղերի համակցությունը ցուցաբերեց նշանակալի արդյունք դուտաստերիդի համեմատ 3-րդ, տամսուլոզինի համեմատ՝ 9-րդ ամսից սկսած: Առավելագույն արագության (Q_{max}) համար դեղերի համակցությունը նշանակալի էր 6-րդ ամսից սկսած՝ համեմատած երկուսի՝ դուտաստերիդի և տամսուլոզինի, հետ:

Դուտաստերիդի և տամսուլոզինի համակցությունը կիրառելու դեպքում ախտանիշները բարելավվում են ավելի լավ, քան՝ յուրաքանչյուր դեղի առանձին կիրառումը: Դուտաստերիդի և տամսուլոզինի միաժամանակյա կիրառմամբ բուժումը 2 տարի անց ցույց տվեց վիճակագրորեն նշանակալի ճշգրտված՝ ախտանիշների գնահատման ելային արժեքից -6,2 միավորով միջին բարելավում:

Մեզի հոսքի արագության ճշգրտված միջին բարելավումը ելային արժեքից միաժամանակյա բուժման դեպքում 2,4 մլ/վրկ էր, 1,9 մլ/վրկ՝ դուտաստերիդով և 0,9 մլ/վրկ՝ տամսուլոզինով բուժման դեպքում: Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի ազդեցության ցուցիչի ճշգրտված միջին բարելավումը միաժամանակյա բուժման դեպքում ելային արժեքից պակաս էր 2,1 միավորով, 1,7 միավորով պակաս՝ դուտաստերիդով և 1,5 միավորով պակաս՝ տամսուլոզինով բուժման դեպքում:

Մեզի հոսքի արագության և շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի ազդեցության ցուցիչի բարելավումները վիճակագրորեն նշանակալի էին դուտաստերիդով և տամսուլոզինով միաժամանակյա բուժման դեպքում՝ դուտաստերիդի և տամսուլոզինի մոնոթերապիաների հետ համեմատած:

Բուժման 2-րդ տարվանից հետո շագանակագեղձի ընդհանուր ծավալի և անցումային գոտու ծավալի նվազումը վիճակագրորեն նշանակալի էր միաժամանակյա բուժման դեպքում՝ տամսուլոզինի մոնոթերապիայի համեմատ:

4 տարվա բուժման արդյունավետության հիմնական վերջնակետը սուր միզակապության առաջին դեպքի կամ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատության ժամանակն էր: Դուտաստերիդի և տամսուլոզինի համակցության կիրառումը, բուժման 4-րդ տարվանից հետո վիճակագրորեն նշանակալի նվազեցրեց սուր միզակապության կամ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատության անհրաժեշտության ռիսկը (65,8% ռիսկի նվազում $p < 0,001$ [95% վստահության միջակայքեր՝ 54,7%-ից 74,1%])՝ տամսուլոզինի մոնոթերապիայի հետ համեմատած:

Սուր միզակապության կամ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատության դեպքերն ըստ 4-րդ տարվա տվյալների կազմել է 4,2%՝ համակցված բուժման և 11,9%՝ տամսուլոզինով բուժման համար ($p < 0,001$): Դուտաստերիդի մոնոթերապիայի հետ համեմատած, դուտաստերիդով և տամսուլոզինով համակցված բուժումը 19,6%-ով նվազեցրել է սուր միզակապության կամ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատության ռիսկը ($p = 0,18$ [95% վստահության միջակայքեր՝ 10,9% - 41,7%]): Սուր միզակապության կամ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատության դեպքերն ըստ դուտաստերիդով բուժման 4-րդ տարվա կազմել է 5,2%:

Բուժման 4-րդ տարվանից հետո արդյունավետության երկրորդային վերջնակետը ներառել է շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման համակարգում կլինիկական առաջընթացի (սահմանվում է որպես ընդհանուր հասկացություն. ըստ շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման համակարգի՝ նվազեցում ≥ 4 միավորով, շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված սուր միզակապության դեպքեր, անմիզապահություն, միզուղիների վարակ, երիկամային անբավարարություն) շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման միավորի, մեզի հոսքի առավելագույն արագության (Q_{max}) և շագանակագեղձի ծավալի փոփոխություն: Շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման համակարգը (IPSS) 8 միավորից բաղկացած գործիքակազմ է, որում ներառված է նաև կյանքի որակին վերաբերող լրացուցիչ հարց: Ստորև ներկայացված են 4 տարվա բուժման արդյունքները.

| Ցուցանիշ | Կոնկրետ ժամանակ | Դուտաստերիդի և տամսուլոզինի համակցություն | Դուտաստերիդ | Տամսուլոզին |
|--|------------------------|--|--------------------|--------------------|
| <i>Սուր միզակապություն կամ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատություն (%)</i> | դեպքեր 48-րդ ամսում | 4,2 | 5,2 | 11,9ա |
| <i>Կլինիկական առաջընթաց* (%)</i> | 48-րդ ամիս | 12,6 | 17,8բ | 21,5ա |

| | | | | |
|--|--|-----------------|-----------------|-----------------|
| Շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման համակարգ (միավորներ) | [Ելակետային] 48-րդ ամիս (Փոփոխություն ելակետայինից) | [16,6] -6,3 | [16,4] -5,3բ | [16,4] -3,8ա |
| Q_{max} (մլ/վրկ) | [Ելակետային] 48-րդ ամիս (Փոփոխություն ելակետայինից) | [10,9] 2,4 | [10,6] 2,0 | [10,7] 0,7ա |
| Շագանակագեղձի ծավալ (մլ) | [Ելակետային] 48-րդ ամիս (% Փոփոխություն ելակետայինից) | [54,7] -27,3 | [54,6] -28,0 | [55,8] +4,6ա |
| Շագանակագեղձի անցումային գոյրու ծավալ (մլ)# | [Ելակետային] 48-րդ ամիս (% Փոփոխություն ելակետայինից) | [27,7] -17,9 | [30,3] -26,5 | [30,5] 18,2ա |
| Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի ազդեցության ցուցիչ (BII) (միավորներ) | [Ելակետային] 48-րդ ամիս (Փոփոխություն ելակետայինից) | [5,3] -2,2 | [5,3] -1,8բ | [5,3] -1,2ա |
| Շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման համակարգի 8-րդ հարց (շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված առողջական վիճակ) (միավորներ) | [Ելակետային] 48-րդ ամիս (Փոփոխություն ելակետայինից) | [3,6] -1,5 | [3,6] -1,3բ | [3,6] -1,1ա |

Ելակետային արժեքները միջին արժեքներ են, իսկ ելակետայինից փոփոխությունները՝ ճշգրտված միջին փոփոխություններ են:

*Կլինիկական առաջընթացը սահմանվում է որպես ընդհանուր հասկացություն. շագանակագեղձի ախտանիշների միջազգային գնահատման համակարգում նվազեցում ≥ 4 միավորով, շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված սուր միզակապության դեպքեր, անմիզապահություն, միզուղիների վարակ և երիկամային անբավարարություն:

Չափված է ընտրված տարածքներում/վայրերում (պատահական ընտրված պացիենտների 13 %-ը):

ա. 48-րդ ամսում դուտաստերիդի և տամսուլոզինի համակցությունը նշանակալի էր ($p < 0,001$)՝ տամսուլոզինի համեմատ

բ. 48-րդ ամսում դուտաստերիդի և տամսուլոզինի համակցությունը նշանակալի էր ($p < 0,001$)՝ դուտաստերիդի համեմատ

Դուտաստերիդ

Առաջնային արդյունավետության երկամյա բազմակենտրոն, բազմազգային, պլացեբո հսկմամբ, կրկնակի կույր երեք ուսումնասիրություններում գնահատվել է օրական 0,5 մգ դուտաստերիդի կիրառումը կամ պլացեբոն՝ շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի չափավորից մինչև ծանր ախտանիշներ ունեցող 4325 տղամարդկանց շրջանում, ովքեր ունեցել են ≥ 30 մլ շագանակագեղձի ծավալ և շագանակագեղձի սպեցիֆիկ հակամարմնի՝ 1,5 – 10 նգ/մլ միջակայքում ընկած արժեքներ:

Այնուհետև ուսումնասիրությունները շարունակվել են բաց փուլով և երկարաձգվել են մինչև 4 տարի, իսկ հետազոտությունում մնացած բոլոր պացիենտները ստացել են դուտաստերիդ նույն՝ 0,5 մգ դեղաչափով: Ի սկզբանե պլացեբո-ռանդոմիզացված պացիենտների 37 %-ը և դուտաստերիդ-ռանդոմիզացված պացիենտների 40 %-ը 4 տարվա ընթացքում շարունակվել են մասնակցել ուսումնասիրությանը:

Բաց փուլի երկարաձգմամբ ուսումնասիրությունում մասնակցած 2340 անհատների մեծամասնությունն (71%) ավարտել է բաց փուլով բուժման լրացուցիչ 2 տարվա կուրս:

Կլինիկական արդյունավետության ամենակարևոր ցուցանիշներն են եղել միզասեռական համակարգի հիվանդությունների մասնագետների ամերիկյան ասոցիացիայի ախտանիշային ցուցիչը, մեզի հոսքի առավելագույն արագությունը (Q_{max}), սուր միզակապության և շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատության դեպքերը:

Միզասեռական համակարգի հիվանդությունների մասնագետների ամերիկյան ասոցիացիայի ախտանիշային ցուցիչը շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված ախտանիշների վերաբերյալ 7 կետից բաղկացած հարցաշար է՝ 35 առավելագույն միավորով: Սկզբում միջին միավորը կազմել է մոտավորապես 17: Վեց ամսվա, մեկ և երկու տարվա բուժումից հետո պլացեբոյի խմբում դիտվել է միջին բարելավում՝ համապատասխանաբար 2,5, 2,5 և 2,3 միավորով, մինչդեռ դուտաստերիդի խմբում՝ համապատասխանաբար 3,2, 3,8 և 4,5 միավորով:

Խմբերի միջև տարբերությունը եղել է վիճակագրորեն նշանակալի է: Ախտանիշային ցուցիչի բարելավումը, որը դիտվել է կրկնակի կույր բուժման առաջին 2 տարիների ընթացքում, պահպանվել է նաև բաց փուլի երկարաձգմամբ 2 տարվա լրացուցիչ ուսումնասիրությունների ընթացքում:

Մեզի հոսքի առավելագույն արագություն (Q_{max})

Մեզի հոսքի առավելագույն արագության միջին ելակետային արժեքն ուսումնասիրությունների համար եղել է մոտավորապես 10 մլ/վրկ (նորմայում $Q_{max} \geq 15$ մլ/վրկ): Մեկ և երկու տարվա բուժումից հետո պլացեբո խմբում հոսքի արագությունը

բարելավվել է համապատասխանաբար 0,8 և 0,9 մլ/վրկ-ով, իսկ դուտաստերիդի խմբում՝ համապատասխանաբար 1,7 և 2,0 մլ/վրկ-ով:

Խմբերի միջև այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի էր 1-24-րդ ամիսների ընթացքում: Մեզի հոսքի առավելագույն արագության մեծացումը, որը դիտվել էր կրկնակի կույր բուժման առաջին 2 տարիների ընթացքում, պահպանվել է նաև բաց փուլի երկարաձգմամբ 2 տարվա լրացուցիչ ուսումնասիրությունների ընթացքում:

Սուր միզակապություն և վիրահատական միջամտություն

2 տարի տևողությամբ բուժումից հետո, սուր միզակապության դեպքերը պլացեբո խմբում կազմել է 4,2 %՝ համեմատած դուտաստերիդի խմբի 1,8 %-ի հետ (57% ռիսկի նվազում): Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է և նշանակում է, որ 42 պացիենտ (95% վստահության միջակայքեր՝ 30-73) երկու տարի պետք է բուժվի՝ սուր միզակապության մեկ դեպքից խուսափելու համար:

2 տարվա բուժումից հետո շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի հետ կապված վիրահատությունների դեպքերը պլացեբո խմբում կազմել է 4,1%, դուտաստերիդի խմբում՝ 2,2% (48% ռիսկի նվազում): Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է և նշանակում է, որ 51 պացիենտ (95% վստահության միջակայքեր 33-109) երկու տարի պետք է բուժվի՝ մեկ վիրահատական միջամտությունից խուսափելու համար:

Մազածածկույթ

Դուտաստերիդի ազդեցությունը մազածածկույթի վրա 3-րդ փուլի ծրագրի ընթացքում պաշտոնապես չի ուսումնասիրվել, այնուամենայնիվ, 5-ալֆա ռեդուկտազայի արգելակիչները կարող են նվազեցնել մազաթափությունը և կարող են առաջացնել մազերի աճ՝ արական տիպի մազաթափություն ունեցող պացիենտների շրջանում (արական անդրոգեն մազաթափություն):

Վահանաձև գեղձի ֆունկցիա

Վահանաձև գեղձի ֆունկցիան առողջ տղամարդկանց շրջանում գնահատվել է մեկամյա ուսումնասիրության ընթացքում: Դուտաստերիդով բուժման ընթացքում ազատ թիրոքսինի մակարդակը կայուն է եղել, բայց թիրեոտրոպ հորմոնի մակարդակը փոքր-ինչ բարձրացել է (0,4 մկՄՄ/մլ-ով)՝ բուժման մեկ տարվա ավարտին գտնվող պլացեբոյի համեմատ:

Այնուամենայնիվ, թիրեոտրոպ հորմոնի փոփոխությունները կլինիկորեն նշանակալի չեն համարվել, քանի որ թիրեոտրոպ հորմոնի մակարդակը եղել է փոփոխական, թիրեոտրոպ հորմոնի միջին միջակայքեր (1,4 – 1,9 մկՄՄ/մլ) մնացել են նորմայի սահմաններում (0,5 - 5/6 մկՄՄ/մլ), ազատ թիրոքսինի մակարդակը նորմայի սահմաններում եղել է կայուն և նույնը՝ ինչպես պլացեբոյով, այնպես էլ դուտաստերիդով բուժման դեպքում: Բոլոր կլինիկական ուսումնասիրություններում չի եղել ապացույց, որ դուտաստերիդը բացասաբար է անդրադառնում վահանաձև գեղձի ֆունկցիայի վրա:

Կրծքագեղձի նորագոյացություն

2-ամյա կլինիկական փորձարկումներում, որի ընթացքում տարեկան 3374 պացիենտ ենթարկվել է դուտաստերիդի ազդեցությանը, և 2 տարվա երկարաձգմամբ բաց

ուսումնասիրությունում գրանցվելու պահին, դուտաստերիդով բուժվող պացիենտների շրջանում հաղորդվել է արական կրծքագեղձի քաղցկեղի 2, իսկ պլացերո ստացող պացիենտների շրջանում՝ 1 դեպք:

